

Կրկնային քամակի կոտորածները՝ միջնագրիան բարբարոսութեան սա՛ չարաշուք պատկերները, կը կարծէինք թէ՛ ս՛լ բաւական պիտի ըլլային ուժ- գին թափով մը ցնցելու մեր շարքե- լուն մէջ սողացող կարգ մը ինքնակոչ ատաղնորդները՝ որոնք անկումէ ան- կում կը զլորէին հայ ժողովուրդը՝ իւրոս պատառներ խելու անխիղճ շահամուտութիւնով :

Կը կարծէինք թէ՛ իրենց սղգա- կործան ուղղութիւնն ու զաղտփարի անանկութիւնը յայտարարող մերկա- ցումներէ յետոյ, Վ. Մալեզեան եւ իր ուսակախուժքը ս՛լ պիտի խոնարհէին անողոք ճշմարտութեան առջեւ, ու իրենց թմրութեան ակումբներն ու փտութեան օթեակները շալակած՝ մէկիկ մէկիկ գուրս պիտի ելնէին այն չրապարակէն՝ որ իրենց սղջմութիւնն ու հանճարը () 30,000 նահատակներու արիւնով պոսկեց :

Կը ցուինք սակայն ըսելու թէ սխալած ենք մեր այս լաւատես են- թաղութեան մէջ : « Լուսարեւ-Արեւ » Վերջին թիւով հրատարակուած զոյգ մը յօդուածներ չափէն աւելի պերճա- խոս են մեր այս սեռութիւնը ապա- ցուցանելու համար, յօդուածներ՝ ու ընդ վրայ կարծէ ծանրանալ՝ ի յայտ բերելու համար անոնց հեղինակներ- րուն տխուր հոգեբանութիւնը :

Մեր նախորդ թուագիկին ի պա- տասխան, Վ. Մալեզեան « Լուսարեւ- Արեւ » թերթով կը յայտարարէ, թէ չի՛ պիտի խոնարհի իւր օգտակար թարգմանապատկէն՝ մեզի նման հասա- րակ մտնկանացուներուն պատասխա- նիկ մը տալու համար () : Անկա- րելի է ջերմեանդ երկիւղածութիւնով մը չի խոնարհիլ այսքան փտուար յայտարարութեան մը առջեւ : Որքան ալ ինք օգի վերին խաւերուն մէջ ամփոփուած ըլլայ, բարեազգարար Ն. Վեհափառութեան արքայական ականջ- ները մինչեւ մեր սահմանները կը հասնին այս փաղաքական սողերը լսե- լու համար . . . :

Են՛ղճ մարդ, « megalomanie » ի միջրոպները այնքան խորերը միտած են իր հոգիին մէջ որ՝ բժշկական ար- ուեստի նորագոյն գարմանները օչինչ պիտի կրնային ընել իրեն համար : Այսպիսի ծանրակշիւ պարագաներու համար « Պաղ տուշ » շատ կը գովէր լուսանոցի մամերնիս, արդեօք ֆեյզիլի սօքթօնին կարծիքը ի՛նչ է այս մասին :

Մեր անաչառ ոգին այն աստիճան գրգռած է իւր մէջ մոլուցքի թելերը որ՝ ուսիկներու վարիչը՝ պահ մը հա- լասարակչուութիւնը կորսնցնելով՝ մո- լեգին հարուածներ կ'իջնցնէ ալ ու ձախ չի ինայելով նոյն իսկ կուսակցութիւն

մը՝ զոր զեռ երէկ բեմերու վրայէն կը խնկարկէր : Կ'երեւի թէ այդ մի- ջավայրին մէջ չէ յաջողած գտնել իւր ակնկալած հողը : Մեր կողմէն, պէտք կ'զգանք յայտարարելու թէ՛ զազափա- րային հարցերու մէջ մենք ուրիշի օգ- նութեան կարօտ չենք եւ մեր համեստ կարողութիւնով կուզանք նոյն իսկ իրեն սա զանք տալու թէ՛ չրապա- րակապրութեան սարբական օրէնքնե- րուն զէ՛մ մեղանշում մըն է՛ այս ին- չը կամ՝ այն ինչը մրտաբու մարմա- ջով անստորագիր յօդուածներ հրա- տարակելը :

Ոչ նուազ ձիճաղելի է այն շիլ փտատարանութիւնը, որով մեր պա- րոնը իւր անունը Ն. Վսեմ. Պոզոս բաշային հետ չիսթելով՝ ինքզինքը Հ. Բ. Ը. Միութեան կենսական ասար- ըր ներկայացնել կը յրակնի : Երեւա- կայէ, ս՛լ ընթերցող, Վ. Մալեզեան մը Հ. Բ. Ը. Միութեան ստատոր կուզէ յորջորջուիլ, գիտն ս ինչու հա- մար, որովհետեւ ուրիշի մը ձրիարար կատարած մէկ պաշտօնը իւրացնելով՝ աղքատներու քսակէն տարեկան 50 օսկիի կլորիկ եկամուտ մը ապահոված է ի նպաստ իրեն : Ի՛նչ մեծ անձ- նութիւնութիւն () :

Փայով բուն խնդրոյն, Պ. Ռամ- կապեա գրչի մէկ հարուածով կուրոնայ այն ամէն հակազինական քարոզները՝ զոր զեռ երէկ իրաթոք կը շիփօէր : Փաղափար մը տուած ըլլալու համար ժողովուրդը զէպի ինքնապիտակցու- թիւն, զէպի ինքնապաշտպանութիւն մղող տարիքն զէ՛մ իւր կատարի յար- ձակութիւններուն մասին, ի ստորեւ կ'ար- տասպինք հատուած մը իւր գրութիւն- ներէն, ուր մեր պարոնը՝ ընդունելով հանգրձ հայրենիքի աղաւտութեան գոր- ծին մէջ յեղափոխականներուն անու- րանալի ծառայութիւնները, նետեւեալ կերպով կը արամարանէ :

« Բայց անցու վտանգի չըջանը, () Խորհրդարանը կազմուեցաւ եւ գործին գլուխը անցաւ : Հայրենիքի վերա- կանդնումի գործը օրինական կոռուանի մը վրայ գրուեցաւ () Բունապետութեան վերջին ճարտուածները հետզհետէ սփը- ուեցան, օճը ալ սատկած էր : (Ի՛նչ հետաւետութիւն () :

« Արեւի ինչու՞ պղեւս յեղափոխա- կան մարմինները : Արդեօք իրենց զե- րը լրացած չէ՞ր այլեւս Միթէ նոր գո՛րժ մը ունէ ին զեռ կատարելիք () եւ յիս »

Ահա Մալեզեանի վարդապետու- թիւնը իւր ամբողջ այլանդակութիւ- նով, վարդապետութիւն մը՝ որուն արժանի պատասխանը առին արդէն վերջին արիւնալի զէպերը : Զարմա- նալին այն է որ իւր վերջին յօդուա- ծին մէջ կուրանայ այս քարոզները :

Այսքան վրան բաց ուրաջումի մը առ- ջեւ, մենք մեզի չ'ենք թոյլատրեր ծանրանալ մէկու մը վրայ՝ որուն ա- ռածպակասութիւնը՝ կերեւի՛ չտի ու սահման չունի : Իանի որ կ'ընդունի - գէթ առ այժմ - մեր կեանքի ներկայ պայմաններուն մէջ զէնքի աննրաժեշ- սութիւնը, մենք փակուած կը համա- րենք այս խնդիրը :

Իսկ Տ. Բէլէկեան իւր վերջին յօդուածով, զոր կը հրատարակէ Աու- սարեք-Արեւի նոյն թիւին մէջ, կը յամասի խնկարկել բեկորները այն լատասկերաին, որուն շանթալից ան- կումին առջեւ իւր արժանաւոր ան- բարիկը՝ Վ. Մալեզեան ձեռքերը լը- ուալով ես կը քաշուի :

Կեղծ Վիգօնթը զեռ հին տախիզը կը գորնէ ու լայնիկցեան կոյր լաւա- սեռութիւնով մը կը յանձնարարէ ըս- պատողական գիրք բոնել, մինչեւ որ հայու պաշտպանները վերջնական վճիռ մ'արձակեն վերջին կոտորածներուն չուրջը : Բայց որոնք են արդեօք այդ պաշտպանները, այն Օսմ. Երեսիո- խաններն են՝ որոնք որտաղմոսա ծա- փերով բնգունեցին ջարդին աղէկը- սուր լուրերը, ապա թէ ոչ այն Եւ- րոպական տէրութիւնները՝ որոնց աչ- քին առջեւ յոյսաւեցան մեր լաւագոյն զաւակները . . . : Հերի՛ք է շերի՛ք, որքան այս ոսկեհի երազներով օրօր- աւեցանք, ա՛լ գիտակցինք իրակա- նութեան :

Չէ՛նք պէտք է մեզի զէ՛նք, ինք- նապաշտպանութեան համար : Չէ՛նք պէտք է մեզի, երբ մահափիւս ման- րօզը կ'եղեւծէ մեր շարքերուն մէջ, զէ՛նք պէտք է մեզ նոյնպէս, երբ իս- զաղութիւնը կը ախրէ, խաղաղութիւն մը՝ որուն յարատեւութիւնը հրացան- ներու ծայրը պէտք է փնտոել, տա- րարախտարար :

Ոչ ոք հակառակ է արկածայինե- րուն ի նպաստ կազմուած նպաստա- մատոյց գործին, եւ արդէն ամէն հայ անկարելին կ'ընէ եւ պէտք է ընէ տա- րարախա գոհերուն օգնութեան հառնե- լու համար, սակայն պէտք չէ՛ աչքէ հեռացնել թէ՛ ոչ նուազ կենսական է ինքնապաշտպանութեան գործը :

Իանի որ կը խոստովանիք թէ ջարդն ու թալանը իրենց ամբողջ ար- հաւիրքներով զէմոնիւան սուրի մը պէս կախուած են ժողովուրդին գլխուն վը- րայ, պէ՛տք է զեռ սպասել, սպասել . . . մինչեւ որ նոր գիտկոյաներ խոնանան Հայաստանի ճամբաներուն վրայ :

Որ ունիցի օկանջս լսելոյ լուրիցէ :

Ի գիմօց բողբոջ Մասնախուժի

Թ. ԱՆՍՆՍԱՆ

ԳԱՆԻԷԼ Գ. ՓԵԹԷՆԵԱՆ

Գահիրէ 24 Մայիս 909

5

10

10 11 12 13 14 15 16 17 18 19 20

THE UNIVERSITY OF CHICAGO PRESS

